ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ
ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Ղահրաման» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ. Հասանյան

Հարգելի Մ. Հասանյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ղահրաման» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **15.02.2022թ.-ին** կնքվել է ԱՔ-Թ8Մ-ԳՀԱՊՁԲ-22/1-10 ծածկագրով Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

22.02.2022թ.-ին Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք պայմանագրի հավելված 1-ում ներառված 37-րդ չափաբաժնի (Թթվասեր) հետագա մատակարարումից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հարկադրված է 2022թ. փետրվարի 25-ից Պայմանագիրը նշված ապրանքի մատակարարման չկատարված մասով մասնակի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվեն որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Ղահրաման» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ»

ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Տ. Մուրադյան

Կ.Տ.